ՄԵԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ «ԱՐՄԵՆԻԱ»-Ի ԷՋԵՐՈՒՄ (1894–1895 թթ.)

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ֆրանսիայի Մարսել քաղաքում հրատարակվող «Արմենիա» պարբերականը մշտապես ուշադրության առանցքում էր պահում Հայ դատի զարգացումների շուրջ մեծ տերությունների և եվրոպական դիվանագիտության դիրքորոշումները, որդեգրած քաղաքական կուրսը: Սույն կարևոր հիմնահարցի շուրջ իրատեսական մոտեցումներով տեսական-քաղաքական բնույթի հրապարակումներ էր ունենում թերթի խմբագիր-տնօրեն Մկրտիչ Փորթուգալյանը, ինչպես նաև տարբեր գաղթօջախներ ու քաղաքական հայացքներ ներկայացնող գործիչներ: Ընդ որում, սկզբնական շրջանում եվրոպական տերությունների հանդեպ մոտեցումներն առավել մեղմ էին, սակայն 1894–1895 թթ. Արևմտյան Հայաստանում ընդհանուր իրավիճակի վատթարացմանը զուգահեռ՝ վերոնշյալ դիրքորոշումներն ընդունեցին առավել կարծր ու արմատական բնույթ: Ոչ միայն «Արմենիա»-ի, այլև հայ հասարակական-քաղաքական մյուս ուժերի համար պարզ էր, որ Բեռլինի դաշնագրի տխրահռչակ հոդվածը առավել վտանգի տակ է դնում հայ ժողովրդի հետագա ճակատագիրը[1]:

Եվրոպական տերությունների ու նրա դիվանագետների վրա հույսեր չկապելու Փորթուգալյանի ընդհանրական դիրքորոշումով է պայմանավորված այն մոտեցումը, թե Հայաստանը իր հարստահարված վիճակից ազատելու համար գործի ասպարեզը հենց բուն երկրումն է: Թերթի էջերում հաճախ էին հնչում այն հարցադրումները, թե իրականում ով կամ ովքեր են շահագրգռված ազատագրելու Հայաստանը: Այս առումով շատ իրատեսական է սույն հարցադրումը. «Եթե կը հավատանք թե հայ ժողովուրդը պիտի ազատե Հայաստանը, գործի բուն ասպարեզը Հայաստանի մեջ է, իսկ եթե կը հավատանք թե եվրոպական տերությունները և Ամերիկայի Միացյալ Նահանգների հանրապետությունը պիտի երթան Հայաստան՝ ազատելու այդ երկիր, այն ժամանակ գործի բուն ասպարեզը այս երկիրների մեջ է»[2]: Պատասխանելով

---

[1] *Ն. Ադոնց. Հայկական հարց, Երևան, 1996, էջ 55:*

[2] *«Արմենիա», 1894, թիվ 36:*

սույն հարցադրմանը՝ պարբերականի խմբագիրը հետևյալն է ընդգծում. «Մեր համոզմամբ, Եվրոպայի մեջ հայերի մասին գրելու, խոսելու, պոռալու ազատ ասպարեզն է, իսկ գործելու բուն ասպարեզը Հայաստանի մեջ է»[3]:

Սույն բանաձևումը Մ. Փորթուգալյան գործչի գաղափարական կրեդոն էր՝ հավատո հանգանակը: Ելնելով վերոնշյալից՝ նա հավատացած է, որ Ամերիկայի և Եվրոպայի հայերը Հայոց դատը աշխարհին ներկայացնելու իրենց մտադրություններով «մինչև մեկ աստիճան կրնան օգնեն Հայաստանի ազատության գործին. բայց այդ գործ չեն կրնար կառավարել հեռուներեն. կառավարողները բուն Հայաստանի մեջ պիտի լինին»[4]:

Այո, իրավ, ճշմարտացի է դատում հայրենանվեր գործիչը, քանի որ հայ ժողովրդի գոյությունը հայրենի հողի վրա ուժ և լիցքավորում է տալիս հայրենասիրական գործունեություն ծավալելու համար, իսկ երբ հայությունը չգործե Հայաստանի մեջ, երբ «հայ ժողովուրդ չլինի Հայաստանի մեջ, Հայաստանի խնդիր ալ չլինիր»[5]:

Ահա թե ինչու հեղինակի սիրտն ամենամեծ ցավն է ապրում, երբ ականատես է լինում հայորդիների զանգվածային գաղթին հայրենի երկրից: Այս տեսանկյունից շատ տեղին է հնչում այն հարցադրումը, թե «երբ հայեր անդադար գաղթելով Հայաստանը դատարկին, այլ ինչ ուժ կը մնա այնտեղ գործելու համար»[6]: Այո, հարցադրում, որ մեր օրերում էլ խիստ արդիական է:

Ելնելով սույն տրամաբանությունից՝ Փորթուգալյանը գրում է, որ հայն ինքը պետք է աշխատի Հայաստանի համար, հույսը դնի իր վրա, «իր աշխատանքի, իր պատրաստության և իր անձնվիրության վրա, որպեսզի Հայաստանն ալ իրեն լինի»[7]: Հակառակ դեպքում օտարները օգտագործում են լոկ իրենց շահերի համար: Ժամանակների դժնդակ թոհուբոհում ճիշտ կողմնորոշվելով՝ նա նշում է, որ մենք «այսօրեն ոչ մեկ տերության կուսակցությունը կրնանք ջատագովել և միասին բացեիբաց թշնամի ներկայանալ: Մենք այդ տերություններե մեկին հետ դաշնակցություն կապելու դիրքին մեջ չենք, որ այժմեն իսկ կարենանք ապահովվիլ բոլորովին իր կողմե և մեր դաշնակցի թշնամին մեզալ թշնամի հրատարակել»[8]:

Պատմականորեն ճշմարտացի է այն դիտարկումը, որ բուլղարացիները ազատագրվեցին Օսմանյան Թուրքիայի լծից, որովհետև «պուլ-

---

[3] *Նույն տեղում:*
[4] *Նույն տեղում:*
[5] *Նույն տեղում:*
[6] *Նույն տեղում:*
[7] *«Արմենիա», 1894, թիվ 44:*
[8] *Նույն տեղում:*

կարներն իրենց զիրենք ազատեցին և ոչ թե ռուսը ազատեց զիրենք. միայն թե ռուսը օգնեց իրենց ինչպես և օգնեց հէրսէք – պոսնիացիներին»[9]:

Ինքնավարության և անկախության համար պետք է անհրաժեշտ մակարդակ, այլապես այն երբեք էլ իրականություն չի դառնա: Նորից համեմատական անդրադարձ կատարելով բուլղարական խնդրին՝ Փորթուգալյանը գրում է, որ ռուսը ցանկացավ թուրքից ազատագրված Բուլղարիան «կամաց կամաց իր կոկորդն անցունել, ինչպես կերավ և մարսեց պարսկին ձեռքեն ազատած մեր հայ մելիքություններ, չհաջողեցավ իր այդ ձեռնարկին մեջ, պուլկարները քաղաքականապես զարգացած էին ինքնավարության համար և ռուսի ճանկը չինկան»[10]:

Եվրոպական տերությունների հանդեպ պարբերականի քաղաքական դիրքորոշումը հստակ արտահայտված է «Ռուսիա, Անգլիա և Հայաստան» խմբագրական հոդվածաշարում, որտեղ նշված է, որ թեև մեր մոտ անգլիական ու ռուսական անուններով կազմակերպված կուսակցություններ չկան, բայց քանի որ հայ ազգը իր հայրենիքի ազատության «խնդիրներովն սկսած է զբաղվիլ և ատոր համար օտար մի հզոր պետության պաշտպանությանն ու աջակցությանն ալ մեկ աստիճան հետամուտ է»[11]:

Քաղաքական ու պատմական զուգահեռներ անցկացնելով Անգլիայի և Ռուսաստանի միջև՝ Փորթուգալյանը նշում է, որ երկու տերությունները միշտ էլ գործել են իրենց շահերին խիստ հետամուտ: Թեր ու դեմ պնդումները ի մի հավաքելով արձանագրում է, որ Անգլիայի կողմը հակվողները՝ Ռուսաստանի և Հայաստանի վերջին երկու հարյուր պատմությանը դիմելով կարծում են, որ հայ ազգն այդ ժամանակամիջոցում ամեն ինչ արել է, որպեսզի ռուսական քաղաքականությունը տարածվի Հայաստանում: Սակայն «ռուսը օգուտ քաղելով հայերին իրեն, մի քրիստոնյա պետության, ցույց տված համակրութենեն, եկավ խլեց Պարսկաստանեն Դերբենտը, Բաքուն և Կիլանը հայ մելիքների զորքերին օժանդակությամբը և հետո քաշվեցավ գնաց Պետերբուրգ, հայերը բոլորովին մենակ թողլով իր գրգռած բարբարոս թշնամիների առջև»[12]: Նա ցավով գրում է, որ մի ժամանակ, ոչ իսկ 100 տարի առաջ, գոնե մելիքներ ունեինք, «դեռ որոնք իրենց հրամանի տակ հայ զորագունդեր ունեին. ատոնց մեջեն կրնար ելնել մի Դավիթ Բեկ, Հայաստանի անկախության հույսերը արծարծող»[13]: Սակայն ռուսաց կառավարությունը բոլորովին կազմալուծեց հայկական ինքնավարության պո-

[9] *Նույն տեղում:*
[10] *Նույն տեղում:*
[11] *«Արմենիա», 1894, թիվ 39:*
[12] *Տե՛ս նույն տեղում:*
[13] *Նույն տեղում:*

տենցիալ միջուկը հանդիսացող հայոց մելիքությունը: Այս ամենից հետո ենթադրելի է այն հարցականը, որ «Մի՞թե պատմական այնչափ փորձերե ու փորձանքներե հետո, տակավին կարելի է հույս դնել Ռուսիայի վրա, թե նա կօգնե այժմ իր դրացի Տաճկահայաստանին ինքնավարություն ձեռք բերելուն, երբ ինք ալ միլիոնավոր հայ հպատակներ ունի իր ճանկերի տակ»[14]:

Անթաքույց է, որ Հայաստանը ռուսների համար հետաքրքրություն է ներկայացնում լոկ իրենց նեղ ազգայնական շահերի տեսանկյունից, և ցարիզմը վերոնշյալ նկրտումներով ցանկանում է գրավել Հայաստանը մինչև Կիլիկիա: Անգլիան հակառակվում է, քանզի այն կտրուկ հակասում է իր շահերին: Հենց այդ պատճառով նույն Անգլիան «կը փափագի միշտ, որ ռուսին և իր միջև ուրիշ ազգեր թումբեր լինին, ինչպես այժմ թյուրքին կը գործածե իբրև մի թումբ ռուսին դեմ»[15]:

Հոդվածը եզրափակվում է նրանով, որ պատմականորեն ստեղծված ու ձևավորված այդպիսի հանգամանքների առկայությամբ ավելի խելացի է հաշվի առնել, որ «Անգլիացիները թեև շահախնդիր համարված են (և ո՞վ չէ այդպես), բայց շատերին կրնան նաև մարդասիրության տիպար հանդիսանալ: Մի՞թե Լորտ Պայրոնները, որոնք ուրիշ ազգերի ազատությանը համար կռված ու զոհված են, Անգլիացի չեն»[16]:

Պարբերականի էջերում նպատակադրված շարունակելով սույն բանավեճը՝ Փորթուգալյանը խոսք է բացում հակառակ պնդումների շուրջ, տեղի տալով այն կարծիքների առջև, որոնք համոզում են, թե Ռուսիան շատ ավելի հուսալի և արդարասեր պետություն է հայերի համար, քան Անգլիան: Ռուսասերների պնդումների համաձայն, իսկ «ի՞նչ արած է Անգլիա հայերիս համար. մի՞թե նույնիսկ Պերլինի դաշնագրի 61-րդ հոդվածի ծնունդը Ռուսիայի չենք պարտիր. և մինչդեռ Ռուսիա Սան Ստեֆանոյի դաշնագրի մեջ տաճկին ընդունել և ստորագրել տված էր «Հայաստան»-ի այժմ ևս գոյությունը»[17]: Ռուսամետների կարծիքով, թեև Ռուսաստանի դարավոր ծրագիրն է գրավել Հայաստանը, բայց դրա դիմաց, ինչ օգուտ, եթե թշնամական դիրք գրավենք Ռուսիայի հանդեպ և շրջվենք դեպի Անգլիան: Չէ որ «Անգլիա Հայաստանեն շատ հեռու է մեզ պաշտպանելու համար և արդեն նա սովորություն չունի տկար ազգերին օգնելու»: Դա այդպես է, քանի որ անգլիացիները օգնում են միայն այն ժողովուրդներին, որոնք արդեն ազատագրվել են տիրապետողների լծից, «գորացած և հառաջդիմելու վրա են, այնպես որ կրնան անոնցմե մի շահ ակնկալել»[18]:

Հոդվածաշարի եզրափակիչ մասում Փորթուգալյանը շարադրում է սույն հիմնահարցի շուրջ իր որդեգրած դիրքորոշումն ու փաստարկները, սկսելով սույն հարցադրումից. «կուգանք այն կետի թե մենք ի՞նչ կուսակցության կը պատկանինք»[19]: Որպես պատասխան, հետևյալ խտացված միտքն է հայտ-

---

[14] *Նույն տեղում:*
[15] *Նույն տեղում:*
[16] *Նույն տեղում:*
[17] *«Արմենիա», 1894, թիվ 41:*
[18] *Նույն տեղում:*
[19] *«Արմենիա», 1894, թիվ 44:*

նում. «Ինչպես ուրիշ ալ անգամներ ալ կրկնած ենք մեր կուսակցության նշանաբանն է՝ Հայը Հայաստանին և Հայաստանը հային»: Աներկբա հասկացնում է ընթերցողներին, որ հայությունը պետք է կարողանա մի համախումբ դառնալ և կարելվույն չափ պաշտպանել իր շահերը, հակառակ դեպքում օտարները հային կօգտագործեն լոկ իրենց շահերի համար:

Մ. Փորթուգալյանը կատարում է շատ ուշագրավ եզրակացություն, ըստ որի՝ «Հանգամանքների և օրվան պահանջներին համեմատ կը փոփոխվի այդ տերությունների դեպի մեզ ցույց տված քաղաքականությունը. միայն թե մենք պետք է այն վիճակի մեջ գտնվինք, որ կարենանք ազդել այդ քաղաքականության վրա»[20]:

Հետզհետե պարբերականի դիրքորոշումը եվրոպական պետությունների հանդեպ առավել սաստկացավ և հաճախ էր կոչ արվում առանձնապես հույսեր չկապել զանազան հանձնաժողովների հետ: Այսպես, 1895 թ. մարտի 13-ին, քննադատական խոսք ուղղելով մեծ տերությունների հասցեին, թերթը նշում է, որ օր առաջ «Ապահովություն պետք է հաստատել Հայաստանի մեջ. ա՛յս պետք է լինի մեր ամենիս ջանքը: Եթե մեր հույս քոմիսիոնի վրա դնենք, անգութ և անխելք թուրքը դեռ ինչ նորնոր օրորներով պիտի օրորե զ Եվրոպան, մինչև որ հայուն ալ մահու քուն քաշել տա»[21]:

Ճշմարտացի է այն դիտարկումը, որ 1878 թվականից ի վեր, երբ բարենորոգումներ անցկացնելու ճնշում է իր վրա զգացել սուլթանական կառավարությունը, ձգտել է կազմել ««քոմիսիոններ», անկից վերջ «Բարեկարգությունը ընդհանուր պիտի ընեմ» ըսելով ժամանակ անցուցեր, տասնյոթ տարիներ զբաղեցուցած է Եվրոպան, միանգամայն բացարձակ լրբությամբ ու անգթությամբ Հայաստանը առանց հայու թող տալու դժոխային ամեն գաղտնի և հայտնի հնարքները գործադրած է»[22]: Թերթը քննադատում էր սուլթանի այն մոտեցումը, ըստ որի արևմտահայությունը որևէ տեղ մեծամասնություն չի կազմում, որ այնտեղ բարենորոգումներ իրագործվեն: Ըստ պարբերականի՝ նախ դա կեղծիք է, քանի որ հայոց բացարձակ մեծամասնություն կա Վանի և Բաղեշի կուսակալություններում, իսկ «ամբողջ Վանա կուսակալության մեջ միայն 26 հազար թուրք կա, 30–35 հազար քուրտ… Մուշի երկիրը բուն թուրք տարրը աննշան թիվ մը կը կազմե, քուրտեր են միայն, մեծամասնությունը դարձյալ հայ»[23]: Հետաքրքիր է հոդվածագրի (Փայլակ-Կայծակ) այն եզրահանգումը, որ «… Տարակույս ունիմ թուրքին խոսքով ու գրով արմատական բարեկարգության մը զիջանելուն կամ արդարության հետ հաշտվելուն. նա ա՛յն ժամանակ և անմիջապես զինաթափ կըլլա, երբ եվրոպական կամ անգլիական նավատորմիղի դրոշակը տեսնե Տարտանելի և Վոսփորի նեղուցներուն և ռուս քոզագներու նիզակի ծայրը Կարնո, Վանա, Մուշի լեռնադաշտին մեջ»[24]:

Այո՛, դա էր իրատեսական ճանապարհը, սակայն պատմությունը հոսեց այլ հունով: Եվրոպական տերությունները Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը

---

[20] *Նույն տեղում:*
[21] *Նույն տեղում:*
[22] *«Արմենիա», 1895, թիվ 64:*
[23] *Նույն տեղում:*
[24] *Նույն տեղում:*

իրականության վերածելու ուղղությամբ երբեք չկարողացան ի մի գալ և մեկ-միասնական համախումբ ներկայացնել: Սուլթան Համիդը շատ վաղ ու լավ հասկացավ սույն իրողությունը և տարիներ շարունակ վարպետորեն օգտագործեց մեծ տերությունների միջև առկա հակասությունները: Համիդը, քաջատեղյակ լինելով եվրոպական դիվանագիտության ներքին անցուդարձին ու բարքերին, համոզված էր, որ Թուրքիայի դեմ երբեք հարկ եղած ուժը չի գործադրվելու, ուստի վստահ շարունակեց խուսանավել իրեն ներկայացրած պահանջների միջև և լրջորեն չվերաբերվեց դրանք իրագործելուն:

1895 թ. օգոստոսի 17-ին Արմենական կուսակցության առաջնորդ Մկրտիչ Ավետիսյանը, որը նաև «Արմենիա» թերթի աշխատակիցն էր, սուր քննադատության է ենթարկում եվրոպական դիվանագիտության և մամուլի հարուցած աղմկալից վեճերը հայոց կոտորածների շուրջ և այդ ամենը համարում լոկ ֆիկտիվ մի բան, որպես եվրոպական թերթերի ընթերցողների ձանձրույթը մեղմելու միջոց, նշելով, որ հայերը միշտ էլ միամտություն են ունենում եվրոպական մամուլի երբեմնի հանած աղմուկներն ընդունելու իբրև պետությունների վճիռներ: Այս առումով է ընդգծում, որ «Լոնտոնի, Պետերբուրգի կիսապաշտոնական թերթերի գրածներին եթե նայվեր, մինչև այսօր 5 անգամեն ավելի եվրոպյան մի բանակ Հայաստան իջած պիտի լիներ 61-րդ հոդվածը գործադրելու համար»[25]: Վերլուծության ենթարկելով անցյալի փորձը՝ հոդվածագիրը համոզված է, որ մամուլով և ճառերով Թուրքիային ուղղված այդ բոլոր սպառնալիքները «միայն պիտի ծառայեն Անգլիային ավելի ևս հաստատվելու Եգիպտոսի մեջ, Ռուսիային՝ իր պատերազմական տուգանքների ստացումը փութացնելու և Ալմանիային ալ՝ երկաթուղիի արտոնություններ վաստկելու»[26]: Նա հեգնում է հայոց այն միամտությունը, ըստ որի՝ «կը սկսինք այնպիսի հավատք թե մեր կողմե միայն իրենց դիմելն է մնացեր, Եվրոպա կամ Ռուսիա գթության ձեռքեր բացած մեզ կսպասեն և Սասունի վրեժը քաղաքակիրթ աշխարհը պիտի հանե թուրքեն»[27]: Եվ կրկին ու նորից նույն հարցադրումը, թե մենք մեր արյունակիցների վրա ի՞նչ գութ ունեցանք, նրանց «չկոտորվելու միջոցներ տվինք ու այժմ ալ կարենայինք ավելի մեծ բաներ հուսալ օտար և նյութապաշտ Եվրոպաեն»[28]:

1895 թ. դեկտեմբերի 18-ին պարբերականն այն ուշագրավ տեսակետն էր հայտնում, որ թուրքական կառավարությունը, օգտվելով եվրոպական տերությունների անմիաբանությունից և անվճռական գործելակերպից, «պիտի հաջողի քիչ ժամանակի մեջ հայոց գոյությունը վերցունել և անոնց ստացվածքը թրքաց ու քրդաց սեպ հականելով գուտ թրքաբնակ երկիր մը ընել Հայաստանը»[29]: Պարբերականը առավել խստացնելով գույները, դատապարտության ծանր ոճով նշում է, որ «Եվրոպացիք ինչ-որ գրչով մրոտեցին մի քանի երես թղթի վրա, որ մեր Հայաստանի բարենորոգմանց ծրագիր կը կոչեինք, այսօր

---

[25] *«Արմենիա», 1895, թիվ 5:*
[26] *Նույն տեղում:*
[27] *Նույն տեղում:*
[28] *Նույն տեղում:*
[29] *«Արմենիա», 1895, թիվ 40:*

սուլթանը զայն կը գործադրե իր պաշըպոգուք զորաց ու պաշտոնեից միջոցավ … ավարի տալով ամբողջ քաղաքներ ու գյուղեր»[30]*:*

Այսպիսով, «Արմենիա» պարբերականը հայ քաղաքական իրականության այն փոքրաթիվ օրգաններից մեկը եղավ, որ երբեք չկորցրեց ռեալ իրատեսության զգացումը, չապավինեց եվրոպական տերությունների ու նրանց դիվանագետների սին խոստումներին և դրանով իսկ հայ հասարակայնությանն առաջնորդվեց ճշմարիտ ուղիով ու արժեքներով:

ОСУЖДЕНИЕ ПОЛИТИКИ ВЕЛИКИХ ДЕРЖАВ НА СТРАНИЦАХ «АРМЕНИИ» (1894–1895 гг.)

АРМЕН КАРАПЕТЯН

Резюме

Издававшаяся в Марселе (Франция) газета «Армения» обращалась на своих страницах к политике великих держав по отношению к Армянскому вопросу. Она резко осуждала лживый и двуличный курс, проводимый европейской дипломатией. Газета призывала армян не связывать надежды с европейскими государствами, не верить пустым обещаниям их дипломатов, а рассчитывать исключительно на собственные силы.

THE CRITICISM OF THE GREAT POWERS' POLICY IN THE PAGES OF "ARMENIA" (1894–1895)

ARMEN KARAPETYAN

Summary

The periodical "Armenia" being published in the French city Marseilles, addressed to the policy of the Great Powers concerning the Armenian Cause in its pages. It strongly condemned the false and ambiguous course adopted by the European diplomacy. The newspaper urged the Armenians not to confide the European states and the empty promises of their diplomats and to rely only on their own powers.

[30] *«Արմենիա», 1895, թիվ 42:*